ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 1

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 14 նիստի, կայացած 2025թ. Մարտի 21 -ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Միքաելյան / մարզպետ /
քարտուղար՝ Ա. Մարգարյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Հ. Սահակյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի 1 /մեկ/ միավոր քաղաքացու համասեփականություն հանդիսացող 0,132 հա / ծածկագիր 10-008-0253-0006 / գյուղատնտեսական /խաղող/ այգին փոխադրել վարելահողի չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Կ. Միքաելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքը իրոք փաստացի վարելահող է, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված 0,132 հա գյուղատնտեսական / խաղող / այգին, որը հանդիսանում է քաղաքացի Նարինե Մկրտչյանի սեփականությունը՝ դասել վարելահողերի շարքին:

Առաջարկվեց Արենի համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Արենի համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում համայնքի 1 /մեկ/ միավոր քաղաքացի Նարինե Մկրտչյանի սեփականություն հանդիսացող 0,132 հա / ծածկագիր 10-008-0253-0006 / գյուղատնտեսական /

խաղող / այգին փոխադրել վարեահողի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել հողի սեփականատիրոջը՝ համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Քարտուղար՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ